ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 33-ԱՄՅԱԿԸ

Սիրելի՛ հայրենակիցներ,

այսօր տոնում ենք մեր սրբազան Հայրենիքի՝ Հայաստանի Հանրապետության անկախության 33-ամյակը:

Հազարամյակների պատմություն կերտած մեր երկիրը բոլոր ժամանակներում ստիպված է եղել պայքարել իր ազատության և լինելիության համար, քանզի մեզ բաժին հասած անկախությունը մեզ չմատուցվեց սկուտեղի վրա, այլ ստիպված եղանք վաստակել մաքառումով:

Համաշխարհային պատմության էջերով հազարավոր ազգեր անցան հողմի պես, հազարավոր պետություններ փլուզվեցին անհիշատակ, իսկ հայը շարունակեց տիրոջ պես քայլել իր հողի վրա, լինել աշխարհի ամենահին բնակիչը:

Մեր հազարավոր կորուստների գնով նվաճեցինք ամենաթանկը՝ մեր ժողովրդավար, ինքնիշխան և անկախ պետությունը կերտելու, սրբագրելու ու պահպանելու իրավունքը:

Սիրելի՛ հայրենակիցներ, յուրաքանչյուրիս սրբազան պարտքը պիտի լինի կառուցել ու շենացնել մեր ոստանը, մեր անկախ լինելիությանը վերաբերվել ամենայն երկյուղածությամբ:

Այս օրը պիտի տոն լինի յուրաքանչյուր հայ ընտանիքի համար, քանզի սա մեր սրբազան հայրենիքի վերածնունդն է, ուստի շնորհավորում եմ բոլորիս, խոնարհվում եմ բոլոր նրանց առջև, ովքեր բեռ չեն դարձել Հայրենիքի համար, այլ տարել են նրա հոգսն իրենց ուսերին:

Կեցցե՛ Հայաստանի Հանրապետությունը:

Կեցցե՛ յուրաքանչյուր հայ, ով կրիվ է տալիս նրա ազատության և անկախության համար:

Հարգանքներով՝ Սուրեն Կոստանդյան